

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/7

13 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Բելլուչի Ա.Մ.» ՍՊԸ 17.09.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6209298 արձանագրության դեմ:

«Բելլուչի Ա.Մ.» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնի ՀՏ-ի կողմից 25.08.2015 թ-ի թիվ 6209298 հանձնարարագրով «Բելլուչի Ա.Մ.» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների ուսումնասիրություն: Մասնավորապես, 08.09.2015 թ-ին հարկային տեսուչների կողմից կատարվել է հսկիչ գնում, որի ընթացքում տրամադրվել է ՀԴՄ կտրոն: Ծրագրային խափանման պատճառով կտրոնի վրա ապրանքի անվանումը, քանակը և չափման միավորների տվյալները տպվել են անզլերեն լեզվով: Առաջարկվել է հարկային ծառայողներին խափանումը վերականգնելուց հետո տրամադրել նույն կտրոնի հայերեն տարբերակը: Հարկային տեսուչները ստանալով այդ կտրոնը հայերեն տարբերակով արձանագրել են խախտում և կազմել թիվ 6209298 արձանագրությունը՝ հղում կատարելով 846-Ն որոշման 2-րդ հավելվածի 40-րդ կետին:

Ընկերությունը հայտնում է, որ ՀՀ կառավարության 846-Ն որոշման հավելված N1 13-րդ կետով նախատեսված բոլոր վավերապայմանները պահպանվել են: Պարզապես ծրագրային խափանման պատճառով ապրանքի անվանումը տպվել է անզլերեն լեզվով, որը չի հակասում որոշմամբ նախատեսված կետերին:

Ելնելով վերոգրյալից՝ ընկերությունը խնդրում է քննության առնել վերոնշված փասերը և չեղյալ համարել Կենտրոնի հարկային տեսչության կողմից կազմված թիվ 6209298 արձանագրությունը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ պետի 25.08.2015 թ-ի թիվ 6209298 հանձնարարագրի համաձայն «Բելլուչի Ա.Մ.» ՍՊԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6209298 արձանագրությունը (այսուհետ նաև Արձանագրություն):

Արձանագրությունում մասնավորապես նշվել է, որ գլխավոր հարկային տեսուչ Սուսաննա Թորոսյանի և ավագ հարկային տեսուչ Արմեն Սարգսյանի կողմից 02.09.2015 թ-ին ժամը 14:25-ին և 08.09.2015 թ-ին ժամը 12:28-ին ք.Երևան, Աբովյան 36/1 հասցեում գործող «Բելլուչի Ա.Մ.» ՍՊԸ-ին պատկանող խանութից 2 անգամ կատարվել են հսկիչ գնումներ՝ ընդհանուր գումարով 343850 դրամի: Մասնավորապես, 02.09.2015 թ-ին ժամը 14:25-ին գնվել է 264.350 դրամ արժողությամբ կանացի դրամապանակ, իսկ 08.09.2015

թ-ին ժամը 12:28-ին՝ 79.500 դրամ արժողությամբ տղամարդու կոշիկ: Վաճառողուի կողմից նշված գումարները մուտքագրվել են ՀԴՄ և տրամադրվել են համապատասխան գումարների ՀԴՄ կտրոններ: Կատարված 1-ին հսկիչ գնման ընթացքում տրամադրված կտրոնում գրանցված տեղեկությունները նշագրված են եղել հայերեն, սակայն 08.09.2015 թ-ին ժամը 12:28-ին կատարված հսկիչ գնման ընթացքում տրամադրված կտրոնում գրանցված տեղեկությունները հայերեն նշագրված չեն եղել: Տրամադրված կտրոնում չի արտացոլվել ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված N 1-ի 4-րդ կետով սահմանված պահանջները, ինչը նույն որոշման Հավելված N 2-ի 40-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման առումով դիտվում է որպես ՀԴՄ շահագործման կանոնների խախտում:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվեց Արձանագրությունում նշված 08.09.2015 թ-ին ժամը 12:28-ին կատարված հսկիչ գնման ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոնը: Վերջինիս ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց, որ այդ ՀԴՄ կտրոնի վրա ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տպագրման ենթակա տեղեկատվությունը (տվյալները) առկա է, պարզապես ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա «Գառդիանի տղամարդու կոշիկ» համապատասխան տվյալը նշված է անգլերեն լեզվով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշման Հավելված N 1-ի 4-րդ կետով հստակ սահմանված է, որ ՀԴՄ-ի միջոցով տպագրվող կտրոնի վրա գրանցվող և գնորդին տեսանելի ինդիկատորի վրա արտացոլվող տեղեկությունները պետք է լինեն հայերեն:

Սակայն քննարկվող դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ նշված ՀԴՄ կտրոնում վերոգրյալ տեղեկատվության (տվյալի) անգլերեն լեզվով նշվելը պայմանավորված է եղել զուտ ծրագրի խափանմամբ: Նշված հանգամանքը հիմնավորվում է նաև նրանով, որ ընկերության նույն հասցեում 02.09.2015 թ-ին ժամը 14:25-ին առաջին անգամ կատարված հսկիչ գնման ընթացքում տրամադրված ՀԴՄ կտրոնի վրա տպագրված է եղել ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ նախատեսված համապատասխան տեղեկատվությունը (տվյալները):

Հանձնաժողովը գտնում է, որ Արձանագրությունում նշված խախտման փաստի առկայության համար անհրաժեշտ պայման է, որպեսզի այդ խախտումն ընկերության կողմից կատարված լինի մեղավորությամբ, ինչը, սակայն, քննարկվող դեպքում առկա չէ, քանի որ տեղի է ունեցել ծրագրային խափանում և «Գառդիանի տղամարդու կոշիկ» տվյալն անգլերեն լեզվով է տպագրվել զուտ այդ պատճառով:


Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Արձանագրությունում նշվածը չի կարող դիտվել որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում, հետևապես նաև չի կարող հիմք հանդիսանալ ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորություններ հաշվարկելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կենտրոնի ՀՏ 08.09.2015 թ-ի հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6209298 արձանագրությունը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ